10.10.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
հոկտեմբերի 9-ի N 1665 - Ա որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն համաձայնությամբ տալիս է պատշաճ կերպով հաստատված իր համաձայնությունը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Միջազգային ֆինանսական կորպորացիայից վարկային միջոցներ ներգրավելու նպատակով որպես ապահովման միջոց «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ» ընկերությանը պատկանող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 30,0000406 տոկոսը կազմող՝ 73927 հատ սովորական բաժնետոմսերի և «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 69,9999594 տոկոսը կազմող՝ 172496 հատ սովորական բաժնետոմսերի, ընդամենը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերի, ինչպես նաև ապագայում թողարկվող բաժնետոմսերի, եթե այդպիսիք լինեն, գրավադրման գործարքին՝ հետևյալ պայմաններով՝

1) սույն համաձայնությունն ուժի մեջ կմտնի և վավերական կդառնա միայն՝

ա. եթե Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ կնքվելիք՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող՝ 246423 հատ սովորական բաժնետոմսերի, ինչպես նաև ապագայում թողարկվող բաժնետոմսերի, եթե այդպիսիք լինեն, գրավի պայմանագրի (այսուհետ՝ Գրավի պայմանագիր) համաձայն գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու

կարգում ներառվեն պայմաններ, որոնցով բացառվի բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը՝ առանց Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գրավոր համաձայնությունների,

բ. «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սույն համաձայնության պայմանների գրավոր ընդունումից հետո.

2) սույն համաձայնությունը վավերական է այնքան ժամանակ, քանի դեռ վավերական են սույն համաձայնության 1-ին կետում նշված պայմանները, և ուժի մեջ է գրավի պայմանագիրը:

Գրավի պայմանագիրը որևէ պատճառով անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում սույն համաձայնությունը համարվում է հետ կանչված և անվավեր՝ բոլոր նպատակների համար, իսկ «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը շարունակում է պատասխանատու մնալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և 2002 թվականի օգոստոսի 26-ին Հայաստանի Հանրապետության կառավարության ու «Միդլենդ Ռեսուրսիս Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության միջև կնքված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի պայմանագրով, Հայաստանի Հանրապետության կառավարության, «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ» և «Կասկադ Էներգացանց» ընկերությունների միջև 2015 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված լրացուցիչ համաձայնագրով, ինչպես նաև «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ» ընկերության, «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության և «Կասկադ-Էներգացանց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի ապրիլի 13-ին կնքված համաձայնագրով նախատեսված բաժնետիրոջ բոլոր պարտավորությունների համար.

3) սույն համաձայնությունը կարգավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք նահանգի օրենսդրությամբ: Սույն համաձայնությունից, ինչպես նաև համաձայնագրից ծագած բոլոր վեճերի նկատմամբ կիրառվելու է 2002 թվականի օգոստոսի 26-ին «Միդլենդ Ռեսուրսիս Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կնքված՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի պայմանագրի 10.12-րդ կետով նախատեսված՝ վեճերի լուծման վերաբերյալ դրույթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ